Հաշվետվություն

1. **Անունը, ազգանունը.**

Արթուր Մուրադյան

2. **Զբաղեցրած պաշտոնը.**

ՀՀ ԱԻՆ աշխատակազմի փրկարար ծառայության բնակչության պաշտպանության և աղետների հետևանքների վերացման կազմակերպման վարչության պետ:

3. **Գործուղման վայրը և ժամկետները.**

Թուրքիայի Հանրապետություն ս.թ. մայիսի 30-ից 31-ը:

4. **Հրավիրող կողմը.**

Սևծովյան տնտեսական համագործակցության կազմակերպություն:

5. **Գործուղման նպատակը.**

Մասնակցել Սևծովյան տնտեսական համագործակցության կազմակերպության (ՍԾՏՀԿ) արտակարգ իրավիճակներում օժանդակության ցանցի պատասխանատու պաշտոնյաների (Special Meeting of Liaison Officers of the BSEC Network on Emergency Assistance) անդրանիկ հանդիպմանը:

6. **Քննարկված թեմաները.**

1. Օրակարգի հաստատում:

2. Արտաքին գործերի նախարարների խորհրդի կողմից ընդունված բանաձևերի, որոշումների և առաջարկությունների և դրանցից բխող՝ արտակարգ իրավիճակների նախարարների և ծառայությունների ղեկավարների կողմից ընդունված համատեղ հռչակագրերի ներդրումը:

3. Արտակարգ իրավիճակներում համագործակցության աշխատանքային խմբի առաջարկությունների ներդրումը 2016-ից 2018թթ. ընթացքում:

4. Արտակարգ իրավիճակներում համագործակցության աշխատանքային խմբի աշխատանքների մոդելավորումը:

Պատասխանատու պաշտոնյաների առաջարկությունները ցանցի ներդրման վերաբերյալ:

5. ՍԾՏՀ գլխավոր գրասենյակի և անդամ երկրների համապատասխան ճգնաժամային կառավարման կենտրոնների միջև ուղիղ կապի ներդրման աշխատանքներ:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Իմ կողմից ներկայացվել է ՀՀ-ում արտակարգ իրավիճակների ժամանակ բնակչության պաշտպանության մեխանիզմները և հիմնահարցերը:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Պայմանավորվածություն է ձեռք բերվել, որ պատասխանատու պաշտոնյաների կողմից ներկայավցելու են առաջարկություններ փակ տեսակապի ներդրման ուղղությամբ, որպեսզի անդամ երկրների միջև աղետներին արձագանքումը լինի առավել օպերատիվ և նպատակաուղղված:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Իմ կողմից առաջարկվել է օգտագործել ՌԴ ԱԻՆ-ում կիրառվող փակ տեսակապի ծրագրային փաթեթը, որը նաև ներդրված է ՀՀ ԱԻՆ փրկարար ծառայության հայ-ռուսական հումանիտար արձագանքման կենտրոնում:

10. Գործուղվողը.

Արթուր Մուրադյան

11. Ստորագրությունը.